ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում թափուր պաշտոն

Հայտատու՝ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Բազումի մանկապարտեզ» ՀՈԱԿ
ՀՀ ԿԳՄՍՆ 17.02.2022թ. 08-Ն հրաման
ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Բազումի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ՝ իր կազմում գործող Ազնվաձորի այլընտրանքային խմբի դաստիարակի /0.56 դրույքաչափ/ թափուր հաստիքի համար:
Մրցույթին կարող են մասնակցել թափուր պաշտոնին ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված պաշտոնների նկարագրին համապատասխանող անձիք:
Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):
Մրցույթն անց է կացվելու 2026 թվականի օգոստոսի 27 -ին, ժամը 12:00-ին, Փամբակ համայնքի, գյուղ Բազում, 1-ին փողոց, 2/1 շենք հասցեում:
Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:
Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի հուլիսի 27-ից մինչև օգոստոսի 21 -ը ներառյալ, ամեն օր ժամը 09:00-17:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել www.pambak.am կայքերում:
Մրցույթն անց է կացվելու երկու փուլով՝ գրավոր և բանավոր:
Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝
https://escs.am/am/news/11978
Տեղեկությունների համար կարող եք զանգահարել +374(94)019050 հեռախոսահամարով:
Հասցե՝ Փամբակ համայնքի, գյուղ Բազում, 1-ին փողոց, 2/1 շենք /Բազումի մանկապարտեզի շենք/
+374(94) 019050
Էլ. փոստ՝ bazum.nuh@mail.ru